# ՀՀ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ «ՄԻԴԻԱ-ՇԱՆԳԱԼ» ԵԶԴԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

**Գլխավոր տեղեկություն**

| | |
|---|---|
| Համար | N 281-Ա |
| Տիպ | Որոշում |
| Ակտի տիպ | Հիմնական ակտ (08.04.2021-մինչ օրս) |
| Կարգավիճակ | Գործում է |
| Սկզբնաղբյուր | Հրապարակվել է միասնական կայքում |
| Ընդունող մարմին | ՀՀ փոխվարչապետ |
| Ընդունման ամսաթիվ | 07.04.2021 |
| Ստորագրող մարմին | ՀՀ փոխվարչապետ |
| Ստորագրման ամսաթիվ | 07.04.2021 |
| Ուժի մեջ մտնելու ամսաթիվ | 08.04.2021 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 281-Ա

**«ՄԻԴԻԱ-ՇԱՆԳԱԼ» ԵԶԴԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել Գերմանիայի «Մարդու իրավունքների միջազգային միություն» ոչ առևտրային կազմակերպության կողմից «Միդիա-Շանգալ» եզդիների ազգային միավորում» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բեռի (601 տեղ, 7,815 կգ ընդհանուր քաշով, 100 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 4,788 եվրո, բեռի ցանկը՝ համաձայն հավելվածի, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ու պատերազմից տուժած և կարիքավոր ընտանիքներին անհատույց բաշխման ծրագիրը:

2. «Միդիա-Շանգալ» եզդիների ազգային միավորում» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

***Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ*** **Տ. Ավինյան**

Երևան

07.04.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

***Հավելված***
***ՀՀ փոխվարչապետի***
***N 281-Ա որոշման***

**ԲԵՌԻ ՑԱՆԿԸ**

| NN ը/կ | Առարկա | Քանակը՝ 1 փաթեթի համար | Փաթեթների քանակը | Ընդամենը | Քաշը (կգ) |
|---|---|---|---|---|---|
| 1. | Անիվով թիկնաթոռ | 1 | 15 | 15 | 225 |
| 2. | Հիվանդանոցի մահճակալ | 1 | 14 | 14 | 1540 |
| 3. | Զուգարանի և լոգարանի աթոռներ | 1 | 9 | 9 | 63 |
| 4. | Անվաքայլակ | 1 | 16 | 16 | 160 |
| 5. | Գրասեղաններ | 1 | 15 | 15 | 375 |
| 6. | Տակդիրներ (մեծ) | 20 | 10 | 200 | 100 |
| 7. | Ներքնակներ (առանձին) | 1 | 8 | 8 | 120 |
| 8. | Հենակներ | 2 | 45 | 90 | 45 |
| 9. | Դպրոցական պայուսակ | 1 | 20 | 20 | 10 |
| 10. | Մանկական խաղալիքներ | 90 | 10 | 900 | 50 |
| 11. | Մանկասայլակ | 1 | 4 | 4 | 44 |
| 12. | Դպրոցական պարագաներ | 50 | 12 | 600 | 60 |
| 13. | Հիգիենայի պարագաներ (լվացքի միջոցներ, օճառ, շամպուն, ձեռքի կրեմ և այլն) | 35 | 13 | 280 | 455 |
| 14. | Կարի մեքենա | 1 | 5 | 5 | 35 |
| 15. | Գորգեր | 1 | 10 | 10 | 250 |
| 16. | Ջեռուցման սարքեր | 1 | 3 | 3 | 75 |
| 17. | Տնտեսական իրեր | 3 | 9 | 27 | 90 |
| 18. | Միկրոալիքային վառարան | 1 | 5 | 5 | 75 |
| 19. | Էլեկտրական սալօջախ | 1 | 10 | 10 | 400 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 20. | Երաժշտական գործիքներ | 1 | 4 | 4 | 4 |
| 21. | Համակարգիչ, մոնիթոր | 1 | 22 | 22 | 33 |
| 22. | Կահույք | 1 | 8 | 8 | 240 |
| 23. | Կոշիկներ ու պայուսակներ | 12 | 22 | 264 | 110 |
| 24. | Վիրակապական նյութեր | 140 | 12 | 1680 | 96 |
| 25. | Անշարժ հեծանիվներ հաշմանդամների համար | 1 | 3 | 3 | 60 |
| 26. | Հագուստ (տղամարդկանց, կանանց, երեխաների, նորածինների) | 30 | 95 | 2850 | 455 |
| 27. | Անկողնային պարագաներ, սրբիչներ, սեղանի ծածկոցներ, վարագույրներ, կտորե և բրդյա | 25 | 35 | 875 | 245 |
| 28. | Կոշիկներ ու պայուսակներ | 10 | 15 | 150 | 105 |
| 29. | Դպրոցական պարագաներ | 1 | 10 | 10 | 250 |
| 30. | Դպրոցական աթոռներ | 1 | 60 | 60 | 240 |
| 31. | Դպրոցական նստարաններ | 1 | 30 | 30 | 1200 |
| 32. | Ջեռուցման կաթսա | 1 | 1 | 1 | 200 |
| 33. | Փոքր կահույք | 1 | 40 | 40 | 240 |
| 34. | Ներքին դռներ | 1 | 11 | 11 | 165 |
| | Ընդամենը | | 601 | 8239 | 7815 |

**Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ** **Տ. Ավինյան**

07.04.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ